



Handwritten text in Armenian script, likely a fragment of a larger document.

Բ. նկ. Ե.

ասել նաև երկաթագրի մասին. է. դարը հայ ճարտարապետական արվեստի զարգացման լուսազոյն շրջաններից մեկն է. այդ դարից մնացած արձանագրութիւններն էլ իրենց գեղեցկութեամբ և կանոնաւորութեամբ գերազանցում են Ը. Թ. և Ժ. դարու սկզբներին արձանագրութիւններին, որքան էլ վերջիններս բիշ լինեն համեմատութեան համար. երկաթագրի զարգացման հայրենիքը Հայաստանն է, իսկ բոլորագրինը՝ Կիլիկիան: Այստեղ հայ թագաւորներն ու իշխանները, կաթողիկոսներն ու եպիսկոպոսները հովանաւորել են

Handwritten text in Armenian script, possibly a list or a specific document fragment.

Նկ. Թ.

գործութեան և նրա հետ կապւած մանրանկարչական արվեստը. այդ շրջանի լուսազոյն ձեռագիրները բարձրաստիճան անձանց սեպհականութիւն են մեծ մասով: Հայ գրի տեսակները չորսի կարելի է բաժանել. երակաթագիր, բոլորագիր, նոտրագիր, և շեղագիր, իւրաքանչիւր ստորաբաժանումներով և անցման շրջաններով: Երկաթագիրը հայ գրի խոշոր տեսակն է

Two columns of handwritten text in Armenian script, likely a list or a specific document fragment.

Նկ. Ղ.

(Նկար ա. Ը.), որ գործադրում է ձեռագիրների մէջ մինչև ԺԳ. դարը ներկայ տպագրութեան գլխաւանդը: Երկաթագրի միւս տեսակներն են միջին (Նկար գ.) և փոքր երկաթագիրները (Նկ. դ.) իրենց պէսպիսութիւններով: Հին արձանագրութիւնների գիրը սովորաբար խոշոր կամ Մեսրոպեան երկաթագիրն է, բայց կան նաև անցման բոլորագրով և շեղագրով արձանագրութիւններ:

Handwritten text in Armenian script, possibly a list or a specific document fragment.

Բ. նկ. գ.

Նշանաւոր նկարիչ և գրիչ Թորոս Ռսայինի ձեռքը: ԺԲ. դարու կէսերից արդէն երկաթագիրը տեղի է տալիս բոլորագրին, (Նկ. Ե. գ. է.), որ, ինչպէս վերև նկատեցինք, ներկայ տպագրութեան գիրն է և կատարելագոյն տիրապետող է դառնում ԺԳ. դարու նոտրագիրը (Նկ. Ը.) գործադրել է սկսում ԺԳ. դարից, բայց ոչ երբէք այնպիսի ընդարձակ ծաւալով, ինչպէս բոլորագիրը: Գրքերի մէջ ամենից բիշ ընդունելութիւն է գտել շեղագիրը (Նկ. Թ. Ժ.), որ մեր ներկայ սովորական գործածութեան գիրն է, համեմատաբար աւելի դիւանական թղթերում. անհատական

Handwritten text in Armenian script, possibly a list or a specific document fragment.

Նկ. Ժ.

յիշատակարաններում, հազուագիւտ դէպքում նաև արձանագրութիւնների մէջ: Ռուբինեանց իշխանների և յետին շրջանի կաթողիկոսների դիւանական թղթերն ու կոնդակները գրւած են շեղագրով կամ նոտրագրով:

Գարեգին վարդապետ